

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Հայաստանի թաեքվոնդոյի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությունում
իրականացված ուսումնասիրությունների

11 օգոստոսի 2014թ.

Ի կատարումն ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 22.07.2014թ. N 68-Ա/5 հրամանի պահանջի, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) աշխատակազմի սպորտի բարձրագույն նվաճումների քաղաքականության վարչության հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության բաժնի գլխավոր մասնագետ Թ. Հովհաննիսյանը, ներքին աուդիտի բաժնի պետի ժ/պ Գ. Սարգսյանը, գլխավոր մասնագետի ժ/պ Ռ. Օհանյանը և գլխավոր մասնագետի ժ/պ Ա. Ավետիսյանը (այսուհետ՝ ուսումնասիրություն իրականացնող խումբ) ս.թ. հուլիսի 30-ից օգոստոսի 6-ը «Հայաստանի թաեքվոնդոյի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությունում (այսուհետ՝ Ֆեդերացիա) իրականացրել են Ֆեդերացիայի կողմից 2013-14 թթ. Նախարարությունից 08.01.2013 թ. N 7 և 23.01.2014 թ. N 9 պայմանագրերի շրջանակներում «Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին» և «Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքների համաձայն նվիրաբերված դրամական միջոցների նպատակային և արդյունավետ օգտագործման հավաստիությունը պարզելու ուսումնասիրություն:

Ուսումնասիրություն իրականացնող խմբի նպատակային ուսումնասիրության առարկա է հանդիսացել Ֆեդերացիայի թվով 9 մարզիչների և մեկ մարզիկի (հիմնական դիմումատու Վ. Վարդանյան) և Լեոնային Ղարաբաղի Հանրապետության թաեքվոնդոյի ֆեդերացիայի նախագահի կողմից գրություններով (համապատասխանաբար 14.07.2014 թ. և 12.07.2014 թ. թվագրությամբ) (այսուհետ՝ միասին գրություններ կամ առանձին՝ մարզիչների գրություն և ԼՂՀ ֆեդերացիայի գրություն) բերված՝ Ֆեդերացիայի կողմից Նախարարության կողմից հատկացված միջոցների ծախսման և մարզիկների պատրաստման գործընթացների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու խնդիրները:

Վերոնշյալ գրություններով բարձրացված խնդիրների ուսումնասիրության նպատակով ուսումնասիրություն իրականացնող խումբը կատարել է խնդրո առարկա միջոցառումների, ինչպես նաև պատահականության սկզբունքով ընտրված այլ միջոցառումների ծախսերի՝ վերոնշյալ պայմանագրերի պահանջների համապատասխանության գնահատում:

1. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ

ԾԱԽՍՈՒՄՆԵՐԻ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ.

Պայմանագրերի շրջանակներում ստացված միջոցների ծախսերի նպատակով

Ֆեդերացիայի կողմից կազմվել և Նախարարությանն է ներկայացվել միջոցառումների օրացուցային պլաններ (2013 թ. և 2014 թ.), իսկ տվյալ միջոցառումից առաջ՝ ծախսերի նախահաշիվներ (ինչպես սահմանված է պայմանագրերի 2.1.3 կետերով): Միջոցառումների օրացուցային պլաններով նախատեսված միջոցառման փոփոխության դեպքում Ֆեդերացիան պատշաճ կարգով (գրավոր) դիմել է Նախարարությանը՝ միջոցառման վայրը, տեսակը, գումարի չափը փոփոխելու խնդրանքով:

1.1 2013 թ. ծախսեր. 08.01.2013 թ. N 7 պայմանագրի շրջանակներում, նվիրաբերության կարգով, Նախարարությունը Ֆեդերացիային փոխանցել է 18,000 հազար դրամ գումար:

Ուսումնասիրության ընթացքում պարզվել է, որ այդ գումարի հաշվին Ֆեդերացիան նույն ժամանակշրջանում մասնակցել է թվով 12՝ աշխարհի և Եվրոպայի մեծահասակների և երիտասարդների, Հայաստանի մեծահասակների և երիտասարդների առաջնությունների, միջազգային մրցաշարերի և ՈւՄՀ-ների:

Համաձայն Նախարարությանը ներկայացրած հաշվետվությունների, վերը նշված նպատակներով Ֆեդերացիայի ծախսերը կազմել են 18,066.7 հազար դրամ: Ծախսերը հիմնավորող փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքներով պարզվել է, որ նույն ժամանակաշրջանի Ֆեդերացիայի փաստացի ծախսերը կազմել են 17,904.7 հազար դրամ: Նախարարության նվիրաբերած միջոցների և միջոցառումների հետ կապված փաստացի ծախսերի տարբերությունը կազմել է 95,268 դրամ, որը համաձայն 08.01.2013 թ. N 7 պայմանագրի 2.1.9 կետի պահանջի ենթակա է ետ փոխանցման ՀՀ պետական բյուջե:

1.2 Լեռնային Ղարաբաղի Հանրապետության թաերվոնդոյի Ֆեդերացիայի նախագահի գրությամբ՝ Արցախի մարզիկ Հ. Խաչատրյանի՝ 2012 թ. Եվրոպայի երիտասարդների առաջնության (Հունաստան, Աթենքի 2012 թ. հունիսի 14-17) (այսուհետ՝ Աթենքի առաջնություն) ֆինանսական ծախսերի դրվագի հետ կապված. Աթենքի առաջնությանը մասնակցելու նպատակով, Ֆեդերացիան Նախարարությանն է ներկայացրել 4,399.97 հազար դրամի նախահաշիվ: Նախահաշիվով նախատեսվել է ՀՀ երիտասարդների հավաքականի 7 հոգիանոց պատվիրակության (5 մարզիկ, 1 մարզիչ և 1 պատվիրակության ղեկավար) մասնակցության ծախսերը:

Հավաքականի կազմը սահմանվել է Ֆեդերացիայի գործադիր տնօրենի 06.06.2012 թ. թիվ 024 հրամանի համաձայն, որի համար հիմք է հանդիսացել Ֆեդերացիայի մարզչական խորհրդի 15.05.2012 թ. և Ֆեդերացիայի նախագահության 17.05.2012 թ. որոշումները: Ֆեդերացիայի գործադիր տնօրենի վերոնշյալ հրամանի համաձայն, Աթենքի առաջնությանը մասնակցող մարզիկներից 2-ի ծախսերը (Ն. Զարգարյան և Հ. Խաչատրյան) պետք է կատարվեին հովանավորների միջոցների հաշվին, իսկ մնացածինը (այդ թվում՝ մարզիչ և պատվիրակության ղեկավար)՝ Նախարարության նվիրաբերած միջոցների հաշվին:

Ֆեդերացիայի կողմից Նախարարությանը ներկայացված ծախսերի հաշվետվությամբ, ինչպես նաև ծախսերը հիմնավորող փաստաթղթերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ Աթենքի առաջնության հետ կապված ծախսերը կազմել են 4,999.5 հազար դրամ, որից 3,489.2 հազար դրամը՝ Նախարարության նվիրաբերած միջոցների հաշվին, 763.4 հազար դրամը՝ ԼՂՀ ԿԱ սպորտի պետական կոմիտեի կողմից հատկացված միջոցների և 746.9 հազար դրամը՝ հովանավորի միջոցների հաշվին:

Այսինքն՝ ԼՂՀ մարզիկ Հ. Խաչատրյանի համար Աթենքի առաջնության հետ կապված ծախսերը Նախարարության նվիրաբերած միջոցների հաշվին չեն կատարվել:

Այսպիսով, Աթենքի առաջնության հետ կապված Ֆեդերացիայի կողմից նախահաշվի և հաշվետվությամբ ներկայացված (սկզբնական փաստաթղթերով հիմնավորված) ծախսերի տարբերությունը (Նախարարության նվիրաբերած միջոցների մասով) կազմել է 910.8 հազար դրամ (գերաձախս (4,399.97-3,489.17), իսկ 1 մարդու հաշվով միջին փաստացի ծախսը կազմել է 714.2 հազար դրամ:

Ինչ վերաբերում է վերը նշված գրությամբ բերված՝ գումարի մեծ մասի ետ վերադարձին, ապա Ֆեդերացիայի բանկային և (կամ) կանխիկ դրամաշրջանառության փաստաթղթերով այդպիսի ետ վերադարձի փաստ չի գրանցվել:

Կապված մարզիչների գրությամբ բերված՝ վերը նշված միջոցառմանը մասնակցելու նպատակով մարզիկ Ն. Զարգարյանից €1,400 վերցնելու և ետ վերադարձնելու դրվագի հետ, ուսումնասիրություն իրականացնող խումբը գործողություններ չի իրականացրել, քանի որ չի հանդիսացել իր իրավասությունների շրջանակների գործողություն:

Նաև, դիմումատու մարզիչներ Վ. Վարդանյանի և Զ. Այվազյանի և ԼՂՀ թաեքվոնդոյի ֆեդերացիայի նախագահ Վ. Խաչիկյանի հետ ուսումնասիրություն իրականացնող խմբի՝ գրություններով բարձրացված խնդիրների քննարկման վերաբերյալ հանդիպումների ընթացքում դիմումատու կողմերը վերը նշված դրվագի հետ կապված որևէ լրացուցիչ փաստաթղթեր չեն ներկայացրել:

1.3 ԼՂՀ թաեքվոնդոյի ֆեդերացիայի նախագահի գրությամբ՝ Արցախի մարզիկներ Գ. Առուստամյանի և Հ. Խաչատրյանի՝ 2013 թ. աշխարհի առաջնության (Մեքսիկա, Պուեբլա 2013 թ. հուլիսի 15-21, այսուհետ՝ Պուեբլայի առաջնություն) ֆինանսական ծախսերի դրվագի հետ կապված. Պուեբլայի առաջնությանը մասնակցելու նպատակով Ֆեդերացիան Նախարարությանն է ներկայացրել 6,223.6 հազար դրամի նախահաշիվ: Նախահաշվով նախատեսվել է ՀՀ հավաքականի 7 հոգիանոց պատվիրակությունից 4-ի (այդ թվում՝ 2 մարզիչ) մասնակցության ծախսերը (Նախարարության նվիրաբերած միջոցների հաշվին): Ինչ վերաբերում է մնացած 3-ին, ապա՝ Պուեբլայի առաջնությանը մասնակցող մարզիկներից 2-ի ծախսերը (Գ. Առուստամյան և Հ. Խաչատրյան) պետք է կատարվեին ԼՂՀ ԿԱ սպորտի պետական կոմիտեի կողմից հատկացված միջոցների հաշվին (փոխանցում առ 03.07.2013 թ.,

գումարը՝ 3,830.5 հազար դրամ), 1 մարզիկի ծախսերը հոգացել է ՀԱՕԿ-ը՝ մարզիկին անմիջականորեն ֆինանսավորելու միջոցով,

Հավաքականի կազմը սահմանվել է Ֆեդերացիայի գործադիր տնօրենի 02.06.2013 թ. թիվ 72 հրամանի համաձայն, որի համար հիմք է հանդիսացել Ֆեդերացիայի մարզչական խորհրդի 02.06.2013 թ. որոշումը:

Ֆեդերացիայի կողմից Նախարարությանը ներկայացված ծախսերի հաշվետվությամբ՝ Նախարարության նվիրաբերած միջոցների հաշվին Պուերլայի առաջնության հետ կապված ծախսերը կազմել են 6,503.9. հազար դրամ: Ծախսերը հիմնավորող փաստաթղթերի ուսումնասիրությամբ պարզվել է, փաստացի ծախսերը կազմել են 6,418.6 հազար դրամ: Տարբերությունը կազմել է 85.2 հազար դրամ:

Միաժամանակ, համաձայն ԼՂՀ ԿԱ սպորտի պետական կոմիտեին Ֆեդերացիայի ներկայացրած հաշվետվության՝ ԼՂՀ-ն ներկայացնող մարզիկների ծախսերը կազմել են 3,925.8 հազար դրամ: Փաստացի ծախսերը կազմել են 3,936.5 հազար դրամ: Տարբերությունը (գերաձախս) 10.7 հազար դրամ:

Այսինքն՝ ԼՂՀ մարզիկներ Գ. Առուստամյանի և Հ. Խաչատրյանի համար Պուերլայի առաջնության հետ կապված ծախսերը Նախարարության նվիրաբերած միջոցների հաշվին չեն կատարվել:

Պուերլայի առաջնության հետ կապված 1 մարդու հաշվով միջին ծախսը կազմել է 1,725.9 հազար դրամ:

Նաև, դիմումատու մարզիչներ Վ. Վարդանյանի և Զ. Այվազյանի և ԼՂՀ թանքվոնդոյի ֆեդրացիայի նախագահ Վ. Խաչիկյանի հետ ուսումնասիրություն իրականացնող խմբի՝ գրություններով բարձրացված խնդիրների քննարկման վերաբերյալ հանդիպումների ընթացքում դիմումատու կողմերը վերը նշված դրվագի հետ կապված որևէ լրացուցիչ փաստաթղթեր չեն ներկայացրել:

1.4 Մարզիչների գրությամբ՝ 2013 թ. կադետների Եվրոպայի առաջնությանը (Մոլդովա, Քիշնև 2013 թ. ապրիլի 18-21, այսուհետ՝ Քիշնևի առաջնություն) Ա. Մինասյանի մասնակցության ֆինանսական հարցի դրվագի հետ կապված. Քիշնևի առաջնությանը Ֆեդերացիայի 2013 թ. միջոցառումների օրացուցային պլանով նախատեսված չի եղել (Նախարարությանը ներկայացված գրության համաձայն այն փոխարինվել է Պորտուգալիայում պլանավորված Եվրոպայի երիտասարդության առաջնության չմասնակցելու արդյունքում տնտեսված միջոցների հաշվին (Ծանոթություն՝ ժամանակի սղությամբ պայմանավորված ուսումնասիրություն իրականացնող խմբի կողմից տնտեսման փաստը չի ստուգվել):

Քիշնևի առաջնությանը մասնակցելու նպատակով, Ֆեդերացիան Նախարարությանն է ներկայացրել 2,234.6 հազար դրամի նախահաշիվ: Նախահաշիվով նախատեսվել է ՀՀ հավաքականի 6 հոգիանոց պատվիրակությունից 5-ի (այդ թվում՝ մարզիկ Ա. Մինասյան և 1 մարզիչ) մասնակցության ծախսերը (Նախարարության նվիրաբերած միջոցների հաշվին): Ինչ վերաբերում է 1 մարզիկի ծախսերին (ԼՂՀ ներկայացուցիչ Հ. Խաչատրյան), ապա այն պետք է հոգար Ֆեդերացիան՝ իր այլ մուտքերից ստացված միջոցների հաշվին: Հավաքականի կազմը

սահմանվել է Ֆեդերացիայի գործադիր տնօրենի 02.06.2013 թ. թիվ 72 հրամանի համաձայն, որի համար հիմք է հանդիսացել Ֆեդերացիայի մարզչական խորհրդի 09.03.2013 թ. որոշումը:

Ֆեդերացիայի կողմից Նախարարությանը ներկայացված ծախսերի հաշվետվությամբ՝ Նախարարության նվիրաբերած միջոցների հաշվին Քիշնևի առաջնության հետ կապված ծախսերը կազմել են 2,226.5 հազար դրամ: Ծախսերը հիմնավորող փաստաթղթերի ուսումնասիրությամբ պարզվել է՝ փաստացի ծախսերը կազմել են 2,215 հազար դրամ: Տարբերությունը կազմել է 11.5 հազար դրամ:

Այսինքն՝ Քիշնևի առաջնության հետ կապված Նախարարության նվիրաբերած միջոցների հաշվին Ֆեդերացիան կատարել է միայն 5 մասնակիցների հետ կապված ծախսերը:

Կապված մարզիչների գրությամբ բերված՝ վերը նշված միջոցառմանը մասնակցելու նպատակով մարզիկ Արման Մինասյանի ծնողից €200 վերցնելու դրվագի հետ, ուսումնասիրություն իրականացնող խումբը գործողություններ չի իրականացրել, քանի որ այն համարել է իր իրավասությունների շրջանակներից դուրս:

Նաև, դիմումատու մարզիչներ Վ. Վարդանյանի և Ջ. Այվազյանի հետ ուսումնասիրություն իրականացնող խմբի հետ գրություններով բարձրացված խնդիրների քննարկման վերաբերյալ հանդիպման ընթացքում դիմումատու կողմը վերը նշված դրվագի հետ կապված որևէ լրացուցիչ փաստաթղթեր չի ներկայացրել:

1.5 Հանդիպման ժամանակ դիմումատու մարզիչներ Վ. Վարդանյանի և Ջ. Այվազյանի կողմից ՀՀ առաջնությունների ընթացքում ֆինանսական ծախսերի հետ կապված, ներկայացված փաստաթղթերի քննարկում. Վ. Վարդանյանի և Ջ. Այվազյանի կողմից հանդիպման ժամանակ փաստաթղթերի ձևով ներկայացվել են փաստարկներ այն մասին, որ.

1) Ֆեդերացիայի կողմից 2013 թ. օրացուցային պլանով նախատեսված ՀՀ մեծահասակների առաջնությանը (ապրիլ 2013 թ., Երևան) փաստացի մասնակցած մարզիկների թվաքանակի մեջ առկա են տարբերություններ, այն է մեծահասակների առաջնությանը պետք մասնակցել 55 հոգի, սակայն փաստացի մասնակիցների թիվը կազմել է 38-ը: Առաջնության անցկացման նպատակներով նախատեսված էր 1,006.8 հազար դրամ գումար:

Դրվագի հետ կապված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Ֆեդերացիայի 2013 թ. օրացուցային պլանով իրոք նախատեսված է եղել 55 հոգու մասնակցությամբ ծախսեր՝ 1,006.8 հազար դրամ գումարով: Պլանավորման ժամանակ Ֆեդերացիան «Մասնակիցներ» տողով նախատեսել է, ինչպես մարզիկների, այնպես էլ մրցավարների, մարզիչների և բժիշկների մասնակցությունը: Նաև, վերը նշված գումարի հաշվին նախատեսվել է նաև տվյալ միջոցառման հետ կապված սպասարկման այլ ծախսեր (դահլիճի, սարքավորումների վարձակալում, պարգևավճարներ և այլն): Ինչ վերաբերում է այդ առաջնության փաստացի մասնակիցների թվաքանակին, ապա այն կազմել 57 հոգի (այդ թվում՝ մրցավարներ՝ 15 մարդ, բժիշկ՝ 2 մարդ), իսկ փաստացի ծախսերը կազմել են 956.2 հազար դրամ: